Լևամիզոլ պարունակող դեղերը դուրս են բերվում շրջանառությունից՝ լեյկոէնցեֆալոպաթիայի ռիսկի հետևանքով

Առողջապահության ոլորտի հարգելի մասնագետներ,

«Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը ստացել է տեղեկություն այն մասին, որ Դեղերի եվրոպական գործակալությունը խորհուրդ է տալիս դադարեցնել լևամիզոլ պարունակող դեղերի կիրառումը, հիմք ընդունելով Եվրոպական միությունում իրականացված առկա տվյալների ուսումնասիրության արդյունքները, համաձայն որոնց՝ եզրակացվել է, որ լևամիզոլ պարունակող դեղերի օգուտ–վտանգ հարաբերակցությունը այլևս բարենպաստ չէ մեծահասակների և երեխաների մոտ հելմինթոզների բուժման համար:

Ուսումնասիրության արդյունքում հաստատվել է, որ լևամիզոլի կիրառումը կարող է առաջացնել լեյկոէնցեֆալոպաթիա՝ հազվադեպ, սակայն լուրջ կողմնակի ազդեցություն, որը բնութագրվում է գլխուղեղի սպիտակ նյութի ախտահարմամբ: Նշված վիճակը կարող է հանգեցնել ծանր առողջական հետևանքների և համապատասխան բուժման բացակայության դեպքում կարող է հանգեցնել կյանքին վտանգ սպառնացող իրավիճակի:

Լեյկոէնցեֆալոպաթիան կարող է զարգանալ նույնիսկ դեղի մեկանգամյա կիրառությունից հետո, իսկ կլինիկական ախտանիշները կարող են ի հայտ գալ բուժումից մի քանի ամիս անց:

Հաշվի առնելով, որ լևամիզոլը կիրառվում է հիմնականում թեթև ընթացքով հելմինթոզների բուժման համար, և առկա են այլընտրանքային հակահելմինթային դեղեր, կայացվել է որոշում՝ դադարեցնելու լևամիզոլ պարունակող դեղերի շրջանառությունը:

Հայաստանի Հանրապետությունում գրանցված են լևամիզոլ պարունակող Դեկարիս 150մգ և 50 մգ դեղահատերը (ԳՀԻ՝ Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Հունգարիա):

Ամփոփելով՝

- Խորհուրդ չի տրվում կիրառել լևամիզոլ պարունակող դեղերը՝ հազվադեպ, բայց ծանր նյարդաբանական բարդության՝ լեյկոէնցեֆալոպաթիայի առաջացման ռիսկի հետևանքով

- լեյկոէնցեֆալոպաթիա կարող է առաջանալ դեղի նույնիսկ մեկանգամյա ընդունումից հետո, իսկ ախտանիշները՝ ի հայտ գալ ուշ՝ մինչև մի քանի ամիս անց
- Նյարդաբանական դրսևորումները կախված են ախտահարման տեղակայությունից և կարող են ներառել ՝
    - մկանային թուլություն
    - խոսքի խանգարումներ
    - կոգնիտիվ խանգարումներ
    - ատաքսիա
    - պարեզներ
- Քանի որ լեյկոէնցեֆալոպաթիայի ռիսկը նվազեցնելու արդյունավետ միջոցներ չեն հայտնաբերվել, լևամիզոլ պարունակող դեղերի օգուտ-վտանգ հարաբերակցությունն այլևս բարենպաստ չէ հելմինթային վարակների բուժման համար:
- Անհրաժեշտ է դադարեցնել լևամիզոլ պարունակող դեղերի նշանակումը և, անհրաժեշտության դեպքում, ընտրել այլընտրանքային բուժման տարբերակներ:

Առողջապահության ոլորտի մասնագետները կասկածելի կողմնակի ազդեցությունների մասին կարող են առցանց հաղորդել Դեղերի եւ բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն հետևյալ հղումով. www.pharm.am, կամ գրել vigilance@pharm.am էլ. հասցեին կամ զանգահարել թեժ գիծ հետևյալ հեռախոսահամարներով՝ (+374 10) 20 05 05 և (+374 96) 22 05 05: